8-ՐԴ ՆԻՍՏ

21 օգոստոսի, չորեքշաբթի, երեկ. ժամը 8, 1918թ.

Նախագահ *Ավ. Սահակյան* - Կարդում է հրաժարված և արձակուրդ ստացած պատգամավորների ցուցակը, ապա առաջադրում է օրակարգի հետևյալ հարցերը.

ա) Բժշկա-առողջապահական հանձնաժողովի զեկուցումը քոլերայի դեմ կռվելու միջոցների մասին.

բ) Դպրոցական հանձնաժողովի զեկուցումը.

գ) Ձինաթափության խնդիր.

դ) Մահմեդական ֆրակցիայի հարցապնդում:

Բժշկա-առողջապահական հանձնաժողովի կողմից *բժ. Հ. Տեր-Միքայելյանը* զեկուցանում է քոլերայի դեմ կռվելու միջոցների մասին: Զեկուցաբերի կարծիքով անհրաժեշտ է ստեղծել մի արտակարգ հանձնաժողով իշխանությունից անկախ և հատուկ լիազորություններով՝ համաճարակի դեմ կռվելու համար:

Ներքին գործոց նախարար *Արամ Մանուկյանը* հակառակ է. արդեն մրցում է նկատվում զինվորական և քաղաքացիական իշխանությունների միջև առողջապահական գործում և ահա դրա վրա գալու-ավելանալու է մի նոր մարմին: Նա ցանկանում է, որ լիազորություն տրվի ներքին գործոց նախարարության կից

եղող բժշկա-առողջապահական մարմնին. միաժամանակ առաջարկում է միացնել զինվորական և քաղաքացիական առողջապահական մարմինները՝ բյուջեի խնայողության և այլ պատճառների համար:

Սմբ. Խաչատրյան - Առաջարկում է, որ գործը կազմակերպվի ներքին գործոց նախարարության կից. հանձնաժողովը կարող է ծրագիր մշակել և հանձնել նախարարության՝ ի գործադրություն:

Գ. Ենգիբարյան - Առաջարկում է արտակարգ լիազորություն տալ ներքին գործոց նախարարության կից գտնվող բժշկա-առողջապահական մարմնին, խորհրդի բժիշկներից էլ կազմել մի հսկող մարմին, ստեղծել նույնպես թաղային հոգաբարձուներ:

Արշ. Մելիքյան - Քննադատում է քաղաքային ինքնավարությունն ու կառավարությունը, որոնք ոչինչ չեն արել. թեև քոլերայի տարածման համար հող կար, բայց արգելիչ միջոցներ բոլորովին ձեռք չեն առնվել: Ստեղծվելիք հանձնաժողովը պետք է անկախ լինի նախարարությունից և գործունեությունը պետք է տարածե նաև գավառներում:

Հ. Ազատյան - Համաձայն չէ հատուկ լիազորություններով մարմին ստեղծելուն. գործը պետք է տանի կառավարությունը ժողովրդի օժանդակությամբ:

Ստ. Մամիկոնյան - Հիմնական դարմանը գտնում է գաղթականներին իրենց տեղերը վերադարձնելու մեջ և առաջարկում է, որ կառավարությունն աշխատի արագացնել տաճիկ կառավարության հետ այդ առթիվ ունեցած բանակցությունների ընթացքը: Ապա գտնելով, որ ներքին գործոց նախարարը շատ ծանրաբեռնված է, առաջարկում է նոր մարդկանցից մի արտակարգ մարմին ստեղծել առավելն երեք հոգուց բաղկացած, եթե մի լիազորի հանձնումը հարմար չէ:

Բժ. Գր. Տեր-Հակոբյան - Անհրաժեշտ է գտնում հանձնախմբի կազմությունը և առաջարկում է, որ այդ հանձնախումբը ընտրվի խորհրդի հանձնաժողովից:

Բժ. Տեր-Միքայելյան (զեկուցաբեր) - Առաջարկում է, որ արտակարգ լիազորություններով օժտված հանձնաժողովը լինի երեք հոգուց. նրան պետք է տալ դիկտատորական իրավունքներ՝ պատժելու և ամեն կարգի կարգադրություններ անելու համար. վտանգը մեծ է և մտածելու ժամանակ չէ այլևս:

Ներքին գործոց նախարար Արամը կարդում է օրինագծի հոդվածները և առաջարկում է մի կարգ փոփոխություններ մտցնել:

Դ. Զուբյան - Գտնելով, որ այժմ եղած մարմինները ոչինչ չեն արել, անհրաժեշտ է համարում, որ խորհրդի բժշկա-առողջապահական մարմինը իր միջից ստեղծի մի նոր մարմին:

Սիր. Տեր-Մարտիրոսյան - Առաջարկում է, որ ծախսվելիք գումարները նախորոշվեն մանրամասն գումարներով:

Ապա զանազան թեր ու դեմ կարծիքներից և քվեարկության անհաջող փորձերից հետո հարցը թողնվում է կառավարության, որպեսզի նա իր կողմից մի նոր օրինագիծ բերի խորհրդին:

«Զանգ», 25 օգոստոսի 1918թ.